



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

N 162-Ա/2

22.02.2018թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
/ՀԱՎԱՍՏԱԳԻՐ/ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մայիսի 18-ի N 393-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2018 թվականի փետրվարի 14-ի N 125-Ա/2 հրամանով ձևավորված հանձնաժողովի եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու համար վերապատրաստումներ իրականացնելու նպատակով երաշխավորել հետևյալ կազմակերպություններին.

- 1) <<Կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ
- 2) <<Մանկավարժական նախաձեռնություն>> հայկական ասոցիացիա ՀԿ
- 3) <<Կրթություն առանց սահմանի>> ՀԿ
- 4) <<Հույս և ապագա>> երեխաների աջակցության և զարգացման բարեգործական ՀԿ

2. Հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Ա. Բաղդասարյանին՝ պաշտոնապես հրապարակել ընտրության արդյունքները:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՅԱՆ